

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆՅԱՆԻ «ԱՐԵՎՄՈՒՏՔԸ» 1864—1865 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

(Մատենադիտական ցանկ)

Արևմտահայ դեմոկրատական մարտաշունչ պարբերականներից սկզբը՝ «Արևմուտքը», Ստ. Ոսկանյանի խմբագրությամբ հրատարակվել է Փարիզում, 1859 և 1864—1865 թթ.։ Քառամյա անկամա ընդհատումից հետո լույս տեսած նրա համարները, ոչ միայն այժմ, այլև 74—80 տարի առաջ ևս գրադարանային հազվագյուտ նմուշներ էին։

Դեռևս 1901 թ. լեոն, որ իրավամբ կարող է համարվել Ստ. Ոսկանյանի գործունեության առաջին ուսումնասիրողն ու դիտական ղեկավարողը, ստիպված է եղել «Ստեփան Ոսկանյան» ծավալուն հետազոտության մեջ «Արևմուտքի» նոր տարեշրջանի մասին խոսել լոկ անուղղակի աղբյուրներից վերցրած տեղեկությունների և դրանցից կատարած մեկ-երկու քաղվածքների հիման վրա. «Նա ապագա էր, — գրել է լեոն, — որ ազատամիտ լրագրի այս երկրորդ շրջանի մասին մենք ոչինչ չենք կարող ասել. Բիֆլիսում անհնարին եղավ գտնել այդ և հետագա 1865 թվի «Արևմուտքը»»։

Սակայն լեոն, ըստ երևույթին, շարունակել է իր որոնումները։ Այդ են վկայում նրա անձնական արխիվում պահվող այն մի քանի հոդվածների ընդօրինակությունները, որոնք հավանաբար կատարել է նրա բարեկամներից մեկն ու մեկը՝ Ստ. Ոսկանյանի «Արևմուտքի» 1864 թ. նյութերից³։ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում պահվող լեոնի արխիվի այդ նյութերից էլ օգտվել են Ստ. Ոսկանյանի գործունեության մեր ժամանակակից ուսումնասիրողները՝ հանգելով անհամոզիչ հետևությունների⁴, որովհետև նրանք ևս ձեռքի տակ չեն ունեցել «Արևմուտքի» նոր տարեշրջանի համարները։

«Արևմուտքի» 1864—1865 թթ. լույս տեսած համարները, դարձյալ նույն հասկանալի պատճառներով, դուրս են մնացել նաև Ա. Բ. Կարինյանի Ստ. Ոսկանյանի պարբերականին նվիրված ուսումնասիրության շրջանակից⁵։ Բայց, անդրադառնալով Ստ. Ոսկանյանի 60-ական թթ. գործունեության շուրջն արտահայտված կարծիքներին, նա կարևոր է համարել հայտնաբերել այդ մասին իրական դադափար տվող վավերագրերը, դրանց թվում, անշուշտ, նկատի ունենալով նաև «Արևմուտքի» վերահրատարակության ժամանակահատվածի ամբողջական հավաքածուն⁶։

Խնդիրն, այդպիսով, դուրս գալով «Արևմուտքի» պակասող համարները հայտնաբերելու և նրա հավաքածուն լրացնելու շրջանակից, հանդել է առավել կարևոր այն հարցին, թե ինչպիսին է եղել Ստ. Ոսկանյանի խմբագրական-հրապարակախոսական գործունեությունը 1864—1865 թթ.։ Այդ հարցն, ըստ էության, նոր չէ։ Ժամանակին այն հետաքրքրում էր նաև լեոնյն. «Ինչպես և ինչ էր գրում Ստեփան Ոսկանյանը», — հարցնում էր նա և պատասխան որոնում իրեն հայտնի աղբյուրներում։ Իսկ այդ աղբյուրները տարբեր պատասխաններ էին տալիս։

Հայ մամուլի պատմության համառոտ գրքի հեղինակը, որ ծանոթ էր «Արևմուտքի» հետագա տարիներին լույս տեսած համարներին, վկայում էր. «Մինչև 1864 շատ ավիքներ անցած

¹ Տե՛ս «Մուրճ», 1901, № 11, էջ 110—132, № 12, էջ 146—176։

² Նույն տեղում, 1901, № 12, էջ 171։

³ Բավականաչափ ընթերցելի ձեռագրով արտագրված են Ս. Ոսկանյանի «Ազգային», «Ազադուն իշխան» և «Ապտ-ուլ-Ազիդ և հավասարություն» վերնագրով նյութերը՝ «Արևմուտքի» 1864 թ. 2-րդ, 5-րդ և 7-րդ համարներից (տե՛ս ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, լեոնի ֆոնդ)։

⁴ Տե՛ս Ա. Գ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Երևան, 1955, հատ. 1, էջ 314, 388—389, 400, 580։

⁵ Ա. Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, Երևան, 1960, հատ. 2, էջ 431—477։

⁶ Նույն տեղում, էջ 477։

էին արդեն Սեւի և Վոսրորի ավերակները և իրաց կերպարանքը փոխված էր: Արեւմուտի խմբագիրն հասուն միտք մը և ավելի հանդարտ սիրտ մը ստացած՝ առաջին թվով յուր հակառակորդաց երեսը դարձրնելն ետև, սկսավ ավելի լրջորեն դիտել արեւելքը և Կ. Պոլսո հայ հասարակության, հրատարակությանը, Մահմանադրության զրադելով՝ խոռված մտքերն ավելի անդորրացուց և ինքն հանկույց»⁷:

Մեջբերելով այդ հատվածը, Լեոն անհրաժեշտ է համարել հայ լրագրության պատմաբանի խոսքերն ուղեկցել հարցական նշանով, իսկ այնուհետև գրել է. «Վերջին խոսքերը մեղ անհավանական են թվում»: Իրեն զրադեցնող հարցերը պարզելու համար նա դիմել է երկրորդ աղբյուրին՝ Ոսկանյանի մահվան առթիվ գրված հոդվածին, որը «վկայում է, որ նա, համենայն-գնաց, կոմպրոմիսներ չարավ, իր հին կուտրերը չջարդեց. այլ, ընդհակառակն, մնաց նույն ապստամբ ոգին, նույն մարտնչողը»⁸: Հենվելով այդ հոդվածի վրա և ընդարձակ քաղվածքներ անելով թե՛ նրա՛նից և թե՛ ցիտելով այնտեղ բերվող Ոսկանյանի հայերեն գրած վերջին մարտնչող խոսքերը, Լեոն մատնանշել է նրա հանդեսի դեմ հարուցված թշնամանքը և ապա գրել. «Ստեփան Ոսկանը, սակայն, չհուսահատվելով իր թերթի ժամանակավոր զաղարից, հավատարիմ է մնում իր սկզբունքներին...»⁹: Ահա և նրա եզրակացությունը 1864—1865 թթ. «Արևմուտքի» խմբագրի մասին. «Նույն Ոսկանը, նույն թշնամիները, նույն կոիվը: Տարիները կարող էին փոխել արտահայտության ձևը, բայց գաղափարները, սկզբունքները— երբեք...»¹⁰:

Հեղինակը, որի հոդվածին դիմել է և որի վկայության վրա վստահությամբ հենվել է Լեոն, բանաստեղծ Ռուբեն Որբերյանն է: Նա 1901 թ. «Մասիս» 15-րդ համարում հրատարակել էր Ստ. Ոսկանյանին նվիրված չափազանց շահեկան հոդված¹¹: Պատմաբանի վստահության հիմքը բանաստեղծի խոսքի նկատմամբ այն էր, որ նրա «ձեռքում եղել են «Արևմուտքի» վերջին համարները, ուրեմն նրանք, որոնք հրատարակվել են 1864-ին»¹², Ավելացնենք. Որբերյանի ձեռքի տակ եղած 10—15 համարների թվում եղել են նաև հանդեսի 1865-ին լույս տեսածները, որոնք նա ստացել էր հանդուցյալ Ստ. Ոսկանյանի եղբորից՝ Արտաշես Ոսկանյանից. նա մասնավորապես ընդարձակ քաղվածքներ է արել հանդեսի 1865 թ. հունվարի 1-ի համարից¹³: Նաև լրացնենք. Որբերյանն այդ ժամանակ ապրում և աշխատում էր Զմյուռնիայում, որտեղ անցել են Ոսկանյանի կյանքի վերջին 35 տարիները, ուրեմն և հնարավորություն է ունեցել նաև մոտիկից ճանաչելու հայ իրականությունից բաշված և միայն ֆրանսերեն թերթ հրատարակող խմբագիր-հրապարակախոսին:

Այդպես, Ստ. Ոսկանյանի կյանքն ու գործունեությունը ուսումնասիրող պատմաբանը, չգտնելով «Արևմուտքի» 1864—1865 թթ. համարները, դիմել է Գալեմբյարյանի գրքին և Որբերյանի հոդվածին՝ մերժելով առաջինի «անհավանական խոսքերը» և ընդունելով երկրորդի հայտնած կարծիքը, որը հաստատվում էր կատարված քաղվածքներով: Եփտական այդպիսի մոտեցմամբ նա հանդել է ճիշտ հետևության, որը, սակայն, ինչպես նշվեց, հետագա ուսումնասիրողները, հաստատուն կովաններ չունենալով հանդերձ, լույսայն վիճարկել են, նույնիսկ հակառակ կարծիքը հայտնել:

Ստ. Ոսկանյանի հրապարակախոսական գործունեության և «Արևմուտքի» երկրորդ տարեշրջանի հետ կապվող չպարզարանված բազմաթիվ հարցերից վերոհիշյալ հարցը միակը չէ, որ շարունակում է զրադեցնել հետազոտողներին: Սկզբունքային շատ հարցեր նույնպես մնում են չլուծված լուրջ այն պատճառով, որ հայրենական զրապահոցներում չկան հանդեսի 1864—1865 թթ. համարները, բացակայում են դրանց մասին գաղափար տվող լիամփոփ աղբյուրները:

7 Գ. Գալեմբյարյան, Պատմություն հայ լրագրության, Վենետիկ, 1894, էջ 191:

8 «Մուրճ», 1901, № 12, էջ 171:

9 Նույն տեղում, էջ 172:

10 Նույն տեղում:

11 «Մասիս», 1901, № 15, էջ 225—228:

12 «Մուրճ», 1901, № 12, էջ 171:

13 Ռ. Որբերյանն, ի դեպ, իր կատարած քաղվածքներում թույլ է տվել էական բացթողումներ, դրանց փոխարեն, բազմակերպել չղնելով: Առանձին տեղերում էլ նա «սրբագրել» է Ոսկանյանին: Այդ քաղվածքներից օգտվող Լեոն, բնականաբար, մեջբերումները կատարել է ըստ Որբերյանի՝ հնարավորություն չունենալով բնագրային ճշտությանը հետևելու (հմտ. «Արևմուտք», 1865, № 10, էջ 73—75, «Մասիս», 1901, № 15, էջ 226—227 և «Մուրճ», 1901, № 12, էջ 172):

Այժմ այդ բացը վերանում է. մեր ձեռքի տակ է «Արևմուտքը» 1864—1865 թթ. լույս տեսած 12 համարների ամբողջական լուսատիպը¹⁴։ Գրանք ընդգրկում են հանդեսը վերահրատարակվելու օրվանից՝ 1864 թ. փետրվարի 1-ից առ հունիսի 1-ն ընկած ժամանակաշրջանը՝ № № 1—9-ը և ապա ընդհատվելուց հետո կրկին Երևան դալու ժամանակահատվածը՝ սկսած 1865 թ. հունվարի 1-ից առ 1-ր փետրվարի՝ № № 10—12-ը։ Այդ համարների ստորև տրվող մատենագիտությունը, կարծում ենք, կօգնի հայ հասարակական մտքի զարգացման պատմությունն ուսումնասիրողներին՝ որոշակի դադափար տալով Ստ. Ոսկանյանի 1864—1865 թթ. հրապարակախոսական գործունեության և նրա «Արևմուտքի» մասին Առավել կոնկրետ պատկերացում տալու համար մենք հարմար համարեցինք Երբեմն դուրս գալ մատենագիտության նեղ շրջանակից և տալ առավել կարևոր մի շարք նյութերի բիշ թե շատ լայն անոտացիան՝ համապատասխան քաղվածքներով հանդերձ։

«Արևմուտքի» այս համարները ձեռքի տակ ունենալուց հետո տակավին անպատասխան է մնում այն հարցը, թե երբ է վերջնականապես դադարել նրա հրատարակությունը, 1865 թ. փետրվարի 1-ից (№ 12) հետո լույս է տեսել նրա որևէ համարը, թե՞ ոչ։ Այս հարցին պատասխանող որևէ փաստ մեղ հայտնի չէ։ Բայց դժուր են հայ մամուլի հաղորդումներից երևում է, որ Ստ. Ոսկանյանը 1865 թ. վերջերից արդեն գտնվում էր Զմյուռնիայում և ձեռնարկել էր «Ուսումնասիրական ընկերության» հիմնադրմանը¹⁵։ Մնում է ենթադրել, որ 12-րդ համարից հետո «Արևմուտքը», Եթե նրա հրատարակությունը շարունակվել է, երկար ժամանակ չէ որ գոյություն է ունեցել։ Պարզ է նաև այն, որ Ստ. Ոսկանյանը չէր կարող առանց ընթերցողներին հայտնի դարձնելու դադարեցնել իր պարբերականի հրատարակությունը, Եթե, իհարկե, չեն արգելել։ Թերևս հետագա որոնումները որոշակի պատասխան կտան այդ հարցերին նույնպես։

Մ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

1864, Փետրվարի 1, № 1, էջ 1—8

1. Ս. Ո. — Երկու խոսք, էջ 1—2։

Զորս տարվա դադարից հետո կրկին վերահրատարակվող «Արևմուտքի» խմբագիր Ստեփան Ոսկանյանն իր այս հոդված-առաջաբանով հայտնում է, որ անսալով «շատ երևելի անձերի» խնդրանքին, նպատակ չունի խառնել «անցյալի մոխիրը... որպեսզի կիրքերու կայծերը դուրս չցայտին և միտքերը չբորբոքեն»։ Նա դրում է. «Ազատություն և հայրենիք. ահա երկու բառով մեր բոլոր դավանությունը։ Ազատություն մարդերու և ազգերու համար, ազատություն կրոնքի և եկեղեցիներու համար. ազատություն միտքի և գրելու համար. մեկ խոսքով ըսենք ամեն տեսակ ազատություն, վասնզի ազատությունն դուրս ո'չ գիտություն, ո'չ արհեստ, և ո'չ իսկ ձշմարիտ բարոյական կրնանք երևակայել քսան տարի գիրքերու մեջ մեր կյանքը մաշելն ետև... Հայրենիք՝ մարդու անկախություն գտնելու համար և ազատություն՝ ընդհանուր մարդկության ծառայելու միտքով»։

¹⁴ Մենք նախ ստացանք «Արևմուտքի» 1865 թ. № 10-ի լուսատիպը՝ Փարիզի նուպարյան մատենադարանից, նրա տնօրեն Ար. Գարտաշյանից՝ 1970 թ. սեպտեմբերին։ Այդ համարին ներկիրմած մեր հոդվածում («Բաների Երևանի համալսարանի», 1971, № 2, էջ 148—167) անդրադարձել ենք նրա բովանդակությանը և հարակից մի շարք հարցերի։

Այնուհետև, 1971 թ. հուլիսին, ստացանք Անթիլիասի հայկական մատենադարանի հավաքածուից կատարված «Արևմուտքի» 1864—1865 թթ. № № 1—12-ի լուսատիպ ընդօրինակությունը՝ հարգարժան Խ. Հակոբյանի հոգացողությամբ, որի համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում։

¹⁵ Տե՛ս «Արշալույս արարատյան», 1865, դեկտեմբերի 11 և 1866, փետրվարի 5։

2. Ս. ՈՍԿԱՆՅԱՆ.— Ազգային. էջ 2—5:

Ազգային սահմանադրության առթիվ. «Սահման կոչենք մեզ Սահմանադրությունը չքննել, հապա երկինք հանել զայն... Պոռանք ուրեմն մենք ալ ամենուն հետ.— ապրի՛, բյո՛ւր ապրի՛ ֆուատ հայասեր Բաշան... Ձեւէն ետքը կտավին արժեքը հարցնելու չէ հապա շուտով կարելու և հագնելու է զայն, որ մերկ անդամները ծածկվին և հեզնասերներու ծաղրի կետ չըլլան»։ Խոսքն ուղղելով Պոլսի հասարակությանը, կոչ է անում «ասիական սնամհառությունը մեկդի ձգելով լոին գործ տեսնել» և ծառայել լուսավորությանը, չբավարարվել «սահմանի թուղթ մը հաստատել և ֆուատ Վսեմ Բաշային կնիքը վրան դարնել տալով»։ Նա պիտի հիշի, որ «կհնաղանդի միապետի մը, որ աֆսաֆսաֆ կամք ունի... արտոնությունը տվողը զորություն ունի զայն ետ առնուլ առանց մեկն մը ակնածելու երբեք...»։ «Ըշմարիտ հայրենասերներն» «ավելի լավ կընեն լոիկ հայրենիքին ակոսը հերկել սուրբ հունտեր սերմանելով, որ առատ հունձ պատրաստվի»։ Խոստովանելով, որ ստիպված է լոել, Ոսկանյանը գրում է. «Ինչ որ չենք ըսեր, չենք ուզեր ըսելու կամ չենք կրնար ըսելու գուշակության կթողունք... Քաղբին կրթությունը կես բերնով կսովորվի»։ Ազգային ատենապետություն հիմնելու և ատենապետ ընտրելու առթիվ Ոսկանյանը փափագ է հայտնում, որ «այս ատյանը գահի փոխվի օր մը», որ ատենապետությունը շմոռանա «հին պարթևությունը» և «Հայաստանի շահը»։ Հակառակ դեպքում «Արևմտքը» խոստանում է «ատենապետը առնուլ Պարթևին առջև դնել և բոլոր ազգը հրավիրել, որ դատե և եթե պակասավոր գտնվի, դատապարտե իսկ»։ Ըստ որում նա հիշեցնում է նաև, «որ Արևմտքն ալ չափ ունի և զայն վավերացուցեր է Բարիզի պատերու վրա դրված մեթրով»։ Ի վերջո նա նույն Պոլսի հասարակությանը խորհուրդ է տալիս «հանգստություն չփնտրել, անդուլ աշխատիլ, իր դրած սահմանն ելնել, հայրենիքի սահմանին մոտենալ և ազգության հիմին համար թուղթեն ուրիշ նյութ մը հնարել...»։ «Մարդու արարածները հարկավ պակասավոր են և կարոտություն ունին միշտ սրբագրվելու։ Երբ բազմություն մը իր ըրածը կսրբագրե գրեթե զենք (կարդա՝ զինք.— Մ. Հ.) կսրբե, կմաքրե, և կընդունի ի վերջն այն փայլությունը, որ լուսավորության սկիզբը կրնա սեպվիլ»,— այսպես է ավարտում խմբագիրն իր խոսքը։

3. Ս. Ո.— Նաբոլեոն Գ-ի նաոը, էջ 5—6:

Նկատի ունի թագավորի ամանորյա ուղերձը, որի առթիվ պնդում է իր նախորդ հոգվածով առաջադրած խնդրի իրավացիությունը։

4. Մանր լուրեր. էջ 6—8:

Քաղված են մամուլից։ Նրկրի բնակչության թվական տվյալները. Ֆրանսիայի ազգաբնակչությունը. Փարիզի հիվանդանոցները և հիվանդների բուժման համար ծախսված միջոցները. Անգլիայի ծովային նավատորմը. Պտղաբեր ծառերի ոռոգման հնարք. Առևտրական կետերը Փարիզի մի հատվածում. Անգլիայի փոստային տնտեսությունը. Փարիզի ազգային գրադարանը. Ամերիկայի վարած պատերազմի զոհերի թիվը և նյութական կորուստները. Ծախսերն ազնիվ ձիերի վրա և ձիերի թիվն Անգլիայում. Խոռովություն Մադագաս-

կարում. Սեծի կիրառումն անղլիական բանակում (Ձինվոր ծեծել Անգլիայի դրոշին պատիվ շրներ)։

1864, Փետրվարի 15, № 2, էջ 9—16

1. Ս. Ո.— ԿԻԹԱՌԻ աճուն հանդեսը, էջ 9—13

Հայ կանանց կրթության, մտավոր զարգացման խնդիրներն առաջ քաշելով, անդրադառնում է հայ խմբագրության հրատարակած առաջին պարբերականի անդրանիկ համարին՝ խստությամբ գնահատելով այն։

2. Ս. Ո.— Կյուրեխներուն վրա զրված վեպ մը, էջ 13—15
(վերջը հաջորդ համարում)։

Մանրամասն վերլուծում է Հ. Քանթելի 1862 թ. հրատարակած վեպը՝ նվիրված վրացիների ընտանեկան կյանքին։ Ոսկանյանը հանդես է բերում քննադատական սուր վերաբերմունք, գտնում է, որ վեպում աղավաղված են վրաց ժողովրդի կյանքը, հայ-վրացական հարաբերությունները։ Նա գրում է. «Տգիտությունը, կրոնական իշխանությունը և քաղաքական պետությունը շահունեին, որ ատելություն և քեն, թշնամություն և նենգություն հպատակ ժողովուրդներու մեջ ստեպ սերմանվին որպեսզի իրենք միայն պտուղ քաղեն ու անվրդով տիրեն կրոնքին և բարոյականին ավերներու վրա»։

3. Մանր լուրեր, էջ 15—16։

Մամուլից քաղված լուրեր և հետաքրքրական նյութերի ամփոփ վերարտադրություն։

4. Ազդ, էջ 16։

Ներում է խնդրում № 1-ում տեղ գտած վրիպակների համար և ուղղում միայն մեկը. 5-րդ էջի «զենք կսրբե» արտահայտությունը՝ պետք է կարդալ «զինք կսրբե»։

1864, ՄԱՐՏԻ 1, № 3, էջ 17—24

1. Ս. ՈՍԿԱՆՅԱՆ.— Պատասխան Բանի մը ազգայիններու, էջ 17։

Պատասխանում է «Կիթառ» պարբերականի մասին նախորդ համարում տպագրված հոդվածը «ծուռ» մեկնաբանողներին և «Արևմուտքի» դեմ ուղղված նոր թշնամանքին։ Պաշտպանելով մամուլի քննադատելու իրավունքը, գրում է. «Լրագիր մը կնամանի պահանջող զինվորի. կհարկադրվի անդուլ հսկել ու վտանգ մը դիտած ժամանակ ձայն տալ, որ օգնություն հասնին»։ Ինչ վերաբերում է եվրոպական սովորույթները կուրորեն ընդօրինակելուն, ապա՝ «փոխ առնունք ուրեմն Եվրոպայեն լույս և ոչ սնգուր։ Լույսը կբավե, որ մեր սերունդին բնական գեղությունը երևելի ըլլա»։

2. Ս. Ո.— Կյուրեխներուն վրա զրված վեպ մը, էջ 18—20
(նույն վերնագրով հոդվածի վերջը)։

3. Կարմիր իրք. էջ 20—21 (բանաստեղծություն)։

Ծանուցման մեջ «Ս. Ո.»-ն հայտնում է, որ «կծու ոտանավորն» ուղարկվել է իրեն։

4. Դյուցազնություն, էջ 21։

Եվրոպայի հյուսիսում մղվող սպառնալիցի մասին է, որի առթիվ գրում է. «Բնականորեն մենք տկարին հետ ենք հղորին դեմ, և Տանրմարբայի փոքր և քաջ ազգը կսիրենք իր ազատության և ժրության համար...»։ Վերադարձված է դանիական մի գնդի դյուցազնությունը։

5. Անկերության օգուտը, էջ 21։

Փարիզի թատրոնի ծառաների հիմնած «Հեռատես» ընկերության մասին է, որի անդամները օրական մեկ սու նվիրելով, միջոցներ են հավաքում հիվանդներին խնամելու համար։ «Հայազգիք,— գրում է հեղինակը,— օրը մեկ սու տվեք և ես ձեզ խոստանամ Հայաստանի շինությունը։ Չորս միլիոն սու կընեն օրը...»։

6. Ս. Ո.— Սոսկալի հրդեհ, էջ 21—22։

Սանտյագոյի մի եկեղեցում բռնկած հրդեհի և նրա հետևանքների ու զոհերի մասին։

7. Ալժերիային ազգահամարը, էջ 22—23։

Վիճակագրական տեղեկություններից արվող հետևություններին հեղինակն ավելացնում է արաբ ժողովրդի վատթար վիճակի մասին իր սիրելի դասընկերոջ՝ զինվորական վիրաբույժ Մարթենի հաղորդած «զարհուրելի տեղեկությունները»։

8. Մանր լուրեր, էջ 23—24։

Պատվիրաններ է տալիս Փարիզի հայոց ազգային վարժարանի հաշիվները բնակելու իրավունք ստացած իզմիրցի Սինաս էֆենդին, որ արդյունքները հրապարակի մամուլում. բողոքում է Բ. Դուան դեմ, որը սլարապ աթոռ չի գտել 200000 հայերի ներկայացուցչի համար. զանազան լուրեր՝ քաղված մամուլից. խնդրանք ազգայիններին՝ աջակցել ուսումնասիրելու նպատակով ուղևորություն ձեռնարկող սլ. դը Լուին։

1864, ՄԱՐՏԻ 15, № 4, էջ 25—32

1. Լեռնականք, էջ 25—27։

Քաղաքում և գյուղում բնակվողների տարբերությունը. փառաբանում է լեռնականներին, անշուշտ նկատի ունենալով զեյթունցիներին։ Լեռնականը, գրում է հեղինակը, «լեռը կշափե իր քայլով և վիհերը կթնդացնե իր վառողով։ Լեռնականը ազատության զինվոր է. ասպարեզ ունի դարավանդը և վահան՝ հինօրյա ապառաժները։ Վերեն կրնդունի հրամանը և վարեն եկած սպառնալիքին կպատասխանե վառողի բերանով.— Բռնավորք, լեռներուս ոտքն անդին մի անցնիք, իր կույս հողը մի կոխեք, դահավիժ կգլորիք, և ազատություն

գողնալու ատեն կգտնեք մահ, մահ անխուսելի: Ասկե հեռու բռնավորք, ձեզի համար թափիշակ աթոռ շունինք հոս, կերսյասե անկողին չկա մեր քով ձեր թույլ մարմիններու համար... Աստված լեռները ազատության տվա՛վ և մեզ իրեն սպահանք Գրավ հոս: Բռնավորք մեր մեջ ոսկե դավազան շանցնիր հասկա երկաթե կեռ, և այս երկաթը զմեզ վիհերե ազատելեն ետքը չպիտի թողու երբեք որ ձեր դարաններու մեջ իյնանք...

Ահ լեռնակալներ կսիրեմ իրեն այս ազատասիրության համար, և լեռներու տեսքը անհուն բերկրություն կտա ինձ, երբ կնշմարեմ զիրենք ամպերով գոտեպինդ, ձյունով պսակված...

Լեռները կսիրեմ, վասնզի բռնավորության ոտքը կոտրած են և իրեն հանդուգն արշավանքին դեմ բնական պատվարներու պես տնկվելով շեն ձգեր, որ անցնի առաջ և լուծ բաշխե ազգերու...

Լեռները կսիրեմ, վասնզի ազատությունը ծովագեմ գետերու պես, իր սարերու և ժայռերու մեջեն վար իջեր և մարդկության վրա ծավալեր է...

Լեռները կսիրեմ ի վերջե, վասնզի լեռներու զավակ եմ: Նախահայրս իր հույսը լեռներու վրա դրավ և այսօր ազգիս հույսը լեռի մը վրա է: Ստարին արևը զգալու և հացը ուտելու ժամանակ երբեմն հոն միտքս կտանիմ...»: Վերջում հեղինակը հիշեցնում է Ալֆրեդ դը Մյուսեի տողը՝ «Կզգամ, որ ազատությունը սիրտիս մեջ կղզրդի», ասպա բերում «հազվագյուտ հեղինակից» մի հատված՝ ֆրանսերեն:

2. Ս. Ո.— Ծանյալ էլն գմսուր յուր, էջ 27—31 (շարունակությունը հաջորդ համարներում):

Վերհիշումների այս ակնարկում Ոսկանյանը նուրբ հումորով պատմում է Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանում իր ուսումնառության, վարժարանի տեսուչ Ա. Փափազյանի, լուսամիտ հոգաբարձուներ Գր. Կոստանդյանի, Հովհ. Նուպարյանի, զմյուռնահայ վարք ու բարքի, կենցաղի ու սովորությունների մասին: Վերհիշում է վարժարանում ֆրանսերենը դասավանդելու առթիվ գաղթօջախում տեղի ունեցած բուռն պայքարը, առաջադրում է «նշմարիտ լուսավորության» ու լուսավորվելու բուն խնդիրները, բուռն ըմբոստությամբ ծառանում է Զմյուռնիայում լայն տարածում գտած «ֆրենկոտության» ու «անոր պժգալի արդյունքների» դեմ: «Այո՛, համոզված եմ, որ իղմիրցիք պիտի զրդջան օր մը իրենց զարտուղության վրա և բոլորովին ուրանալով ֆրենկոտ հայերու միմոսությունը կամ հրապույրքը, պիտի աշխատին հայու նշանով, հայու լեզվով, հայու սիրտով և հայություն պահելով, լուսավորվիլ այսինքն կարծիք փոխել կամ միտք լայնցընել և ոչ ծպտվիլ, ու այնուհետև իրենց շարժումին պիտի կատարեն դեպի Հայաստան և ոչ ուրիշ բաղաքի մը կողմը հակելով՝ մինչև վտարանդության վերջնալու օրը»:

3. Մանր լուրեր, էջ 31—32:

1864, ԱՊՐԻԼԻ 1, N 5, էջ 33—40

1. Ս. Ո.— Ազագուն իշխան, էջ 33—36:

Պամֆլետն ուղղված է Լեոն արևալագուն իշխանի դեմ. քննվում են նրա «անհեթեթ դրվածները», «սուտումուտ հրատարակումները»: Հեղինակը գրում 15 Հունիս, N 3

է. «Զարմանալին այն է, որ խոհեմ ազգայիններ այսպիսի թեթևասրկի մը դրվածները ընդունեն և պաշտպանեն և անկողմնակի կերպով ազգային խընդիրը վտանգի մեջ դրեն և նվրոպայի կողմերը»:

2. Ս. Ու.— Մանյավ էջն զմտուր յուր, էջ 36—39 (նույն վերնագրով հոդվածի շարունակությունը):

3. ՀՐԱՆՏ.— Գաբուն, էջ 39—40 (բանաստեղծություն):

Հրանտի (Ստ. Ոսկանյանի ծածկանունն է) բանաստեղծությունը թվագրված է՝ 1863 թ.:

4. Մանր լուրեր, էջ 40:

Գրություն՝ Պողոս Տատյան մեծապատիվ բեյի մահվան առթիվ տպագրելու աղերսով Կ. Պոլսից հանդեսին ուղարկված նյութի հեղինակին. «Արևմուտքը ցավով կհարկադրվի այսպիսի աղերս մը ընդունիլ և հրավիրել ևս զինքը, որ իր ազգային սերը ուրիշ նյութերու զբաղեցնել ախուհետև, եթե կփափագի ազգին ծառայություն ընել»։ Հաղորդում, որ Մանչեստրում նշվել է Վարդանանց տոներ. «Այսպիսի հայրենասիրություն մը գովեստի արժանի է, վասնզի Հարդան և իր բաջ նիզակակիցները ոչ միայն կրոնքի նահատակ են, այլև ազատության»։ Լուրեր լրագրերից:

1864, Ապրիլի 15, № 6, էջ 41—48

1. Օ. ՅՐՊԵԼ.— Սուլքան Ապտ-ուլ-Ազիզ և հավասարություն, էջ 41—43:

Օրպել ծածկանունով հանդես եկող Ոսկանյանն արձագանքում և քննում է Օսմանյան կայսրության միապետի «բանի մը խոսքերը»՝ իր հպատակների հավասարության մասին։ Հումորով գովում է սուլթանի բերած բարոյական զորությունները և ապա հարցնում՝ «Ի՞նչ հարկ է, անկե ետքը, ինքնապետություն հաստատել. ի՞նչ բանի կծառայել բռնավորություն ընել... Օսմանյան տնտեսությունը փետուր փոխելու վրա է ժամանակին սպասելով, որ մորթը ևս փոխել»։ Խոր տարակուսանք է արտահայտում հռչակվող հավասարության իրագործման նկատմամբ և զուգակշիռ անցկացնելով Նապոլեոն III-ի և սուլթանի միջև, խոստանում է մի այլ անդամ հայտնել իր կարծիքը հավասարության սկզբունքների մասին:

2. Ս. Ու.— Մարգիզ տը Վիլմեր, էջ 44—46:

Իր նույնանուն վեպի հիման վրա Ժ. Սանդի գրած պիեսի վերլուծությամբ փառաբանում է հեղինակին, նաև այն «ժողովրդին, որ տաղանդը կհարգե, վասնզի ինք ալ կհարգվի ազգերու մեջ»:

3. Ս. ՈՍԿԱՆՅԱՆ.— Քանի մը հայերու մատնություն, էջ 46—47:

«Պոլսեցի բանի մը հայեր, մեկ երկու իզմիրցիներու ծափով, մեր հոգվածներեն մեկը թյուրք լեզվի թարգմաններ և Դուառ վսեմ բաշային ղրկեր են որպեսզի Արևմուտքին արժանի պատիժ տրվի իր այն հանդգնության համար, որով պարոն բժիշկ Սերվիշյանը կհրավիրեր ազգասիրություն ընել և ոչ անտարբերություն կամ փառասիրություն իր պաշտոնին վերաբերված խնդիրներուն վրայոք»։ Դա բսություն է, շողորորթություն, հայությունն անարգել է օտարների առջև։ «Լերևուտը» ծունր զնել կամ քծնել չի կարող, «հայու

շուրջը և մեր գիտցածը մեզ կբավեն», իսկ հանդեսի «ազատությունը սահման չունի և ատենապետության մը ներքև չի յնար...»: «Սպառնալիք բան մը չարժեր, կըսենք, վասնզի ճակատնիս բաց է և ոչ ֆեսի մը ներքև ծածկված»: Այդ մատենությունն «Արևմուտքի» դեմ ուղղված յոթերորդ հարվածն է: Եթե կայուն հայրենասիրություն դրսևորվեր «Հայաստան ուրիշ օրենք և շենք կունենար այսօր...»:

4. Մանր լուրեր, էջ 48:

Անանուն մի նամակում արվում է «Արևմուտքի» գովեստը և ազգային գործերի մասին տեղեկություններ հաղորդվում Պոլսից. «Բայց անանունը լավ կրնա հասկընալ, որ այս կերպով լուր տալ պատվավոր մարդու գործ չէ և կենթադրե մեծ վախկոտություն ելի և ոչ ծպտված բարեկամություն»: Հաղորդված տեղեկության առթիվ՝ թե Պոլսի ազգային ժողովում անպատիվ, սնանկ, լրտես մարդիկ կան, իր կծու խոսքն ուղղում է Պոլսում տիրող կարգերի դեմ և նկատում, որ «այս ամենը հետևություն է կիսատ տեսիլներու և անպատեհ նմանություններու», «վեհ հավասարության տեղ բծոտ հավասարության աթուղկանգնվի օտարներու դայթակղություն տալով»: Զանազան լուրեր լրագրերից:

5. Վրեպ, էջ 48:

Ուղղում է էջ 34-ում տեղ գտած վրիպակը:

6. Ազդ, էջ 48:

«Արևմուտքի» գործակալությունը վարող Թյուրապետը հրաժարվել է. «Այսուհետև ինչոր Արևմուտքին կվերաբերվի Բարիզի մեջ, առ պարոն Օրպել զբրվելու է այս հասցեով՝ rue de Condé, 23»:

1864, ՄԱՅԻՍԻ 1, № 7, էջ 49—56

1. Օ. ՕՊՊԵԼ.— Սուլթան Ապտ-ուլ-Ազիզ և հավասարությամբ, էջ 49—51:

«Դժվարին է հավասարությունը լիորեն մեկնել, երբ այսպիսի ծանր բառ մը թագավորի բերենն կելնե և կտարածվի ժողովրդին մեջ... Փորձենք սակայն և աշխատինք ազգայիններու համառոտ տեսիլ մը տալ հավասարության վրայոք»: Այսպիսի խնդիր դնելով իր առջև, Ստ. Ոսկանյանը պարզաբանում է հավասարության հասկացությունը և նրա սկզբունքները. «Հավասարությունը արդարության խնդիր մ' է...»: Կա «երկու տեսակ հավասարություն քաղաքային և քաղաքական (սիվիլ է բոլիթիք)... Հավասարություն ուրեմն օրենքի առջև, երբ այս օրենքը արդարության դրոշմ կկրե և ազատության սպաս կտանի... Մենք կբերկրինք ու ծափ կղարնենք թագավորի բերենն այսպիսի վսեմ բառ մը լսելով, բայց...»: Եվ Ոսկանյանը զգուշությամբ խոսում է այն մասին, որ պետք է նկատի ունենալ նաև մյուս ազգություններին և ոչ միայն իր՝ սուլթանի ազգին, բացի այդ, հավասարություն հռչակելուց հետո «վեհափառ Ապտ-ուլ-Ազիզը կպարտավորի փոքր հրավերը մը զրկել ազատության, որ գա իր քույրը համբուրե», քանի որ հավասարությունն ու ազատությունն անբաժանելի են:

2. Ս. Ո.— Մանչալ էջն զմուտ Իււր, էջ 51—53 (նույն վերնագրով հոդվածի վերջը):

3. Իլլալի Լեզ, էջ 53—55:

Երգը, որի հեղինակը հավանաբար Ստ. Ոսկանյանն է, նվիրված է փլավ-սեր ազգայիններին, գրված է երգիծական ու թեթև շնչով: Ոչ մեծ նախաբանում հեղինակը շեշտում է երգի և երգելու նշանակությունը, կոչ է անում հայ ընթերցողներին այլազգի երգերը մի կողմ ձգել. «Արևմուտքն պատրաստ է իրենց ուրիշ երգեր մեծարել հայու գրգալով»: Բանաստեղծության տակ ստորագրության փոխարեն գրված են բազմակետեր:

4. Մանր լուրեր. էջ 55—56:

Զանազան լուրեր մամուլից, որոնց մեջ նաև Ռերնանի «Վարբ Քրիստոսի» գիրքը 1102 նախատիքի արժանանալու մասին. «Արևմուտքը» դա փառք է համարում և իր կողմից մի զովեստ շնորհում հեղինակին:

1864, ՄԱՅԻՍԻ 15, N 8, էջ 57—64

1. ՀՐԱՆՏ.— Հալբենիֆ և հալբենասիրություն, էջ 57—60:

Խորությամբ բացատրելով հայրենիք հասկացությունը, Ստ. Ոսկանյանը գրել է. «Հայրենիք կըսվի այն հողին կտորը, ուր ընտանիք մը կծաղկի և կմեծնա կամ ընտանիքներու բազմություն մը կամփոփվի և կաշխատի հոն բնտոել և հոն դիզել ապրելու ամեն տարրերը... Հայրենիքը տեսակ մը խանձարուր է, ուր սերունդները կմեծանան և իրարու կհաջորդեն գրեթե անընդհատ կերպով... Այն ամեն ազգումները, որոնցմով կհուզվինք թե՛ բարի և թե՛ հոռի նպատակի մը համար, անոնք ալ հայրենիքի բարոյական հորիզոնը կշինեն... Այն տունը, ուր կծնինք... այն փոսը, ուր մարմին մը դրինք արտասուքով և ուր մենք ևս պիտի ծածկվինք օր մը, այս ամենը հայրենիք է... ...Փոքր հայրենիք մը կըզգանք ընտանիքի, ազգականների և քաղաքակիցների կամ աչքով ըմբռնած ու մատով շոշափած նյութերու քով, և մեծ հայրենիք մը կըմբռնենք հարաբերություններու, շահերու և համոզումներու հողով, որ գյուղը քաղաքի մը և քաղաքը կեդրոնի մը հետ կկապե ու բազմության ազգություն կտա... Հայրենիք այսօր կնշանակե ազգության տուն, բոլորտիքը դրացի և ոչ թշնամի ունենալով... Հայրենիքին էությունը զորություններու բաղադրությամբ կպահվի միշտ: Մեկ տեսիլ հայրենիք չկազմեր, ինչպես մեկ սյուն շենք մը չկրնար վերցնել»:

«Հայրենիքի զգայությունն կծնի հայրենիքի սերը... Այս սերը նվիրական է մյուս երկրային ամեն սերերու մեջ, երբ մանավանդ կմաքրվի, կնվիրվի և իր արևը հայրենիքի արեին կզոհե զոհ և զվարթ սիրով... Հայրենիքի սերը իրավունքի, արդարության, ազատության սեր է, և ահա անոր համար անմահություն արժանի կբարոզի պատմության տարեգիրներու մեջ»:

Մասնավորելով իր խոսքը, հեղինակը ընդգծում է արդարության նշանակությունը. «Մենք հայրենիքն ավելի արդարությունը կսիրենք, վասնզի... Աստված հավիտենական արդարություն կնշանակե և ոչ ուրիշ բան: Հայրենիքի սերը դրոշ ունի անկախությունը: Անկախությունը կենթադրե ինքնօրենություն՝ այսինքն արդարությունն կախում: Ինքնօրենություն, մարդու համար, կենթադրե ազատություն. ինքնօրենություն, ուղեբերու համար, կնշանակե հայրենիք: Արևմուտքը իրավունք ունեի ուրեմն ազատության սիրուն անունը և հայրենիքին վեհ հիշատակը վանդելով ի լույս ելնել ու բնոտ ազգայիններու ձայն տալ... Ազատություն և Հայրենիք ուրեմն միշտ և վերստին: Սակայն... ոչ մեկը ունինք և ոչ մյուսը...»

Այն ստորուկ ՀԱՅԱՍՏԱՆ, վիշտերու օթեան.

Նավ՝ նավաստիե զուրկ մեծ մեռելի ատեն:

...Կնշմարենք, որ Հայաստանի ավերակները պակասելու տեղ կավելանան...» և հեղինակը ցանկանում է, որ Հայրենիքի ողին այցի դա օտար հողի վրա և օտար զգայություններին ենթարկվող հայերի մեծ մասին ու «իր բուն վիճակը հայտնե, վտանգը երևան հանե, հալածումը նկարագրե, զրկումը պատմե, հարվածները թվե, վերքերը ցուցրեն և... պոռա ուժգին.— Զավակներս ահա ձեր մոր վիճակը... Խոսելու ժամանակը անցավ, վերքերը դիս կկըրծեն և թշվառությունը դիս կհայուծե, զավակներս բարեի և ավետիքի կարոտություն չունիմ հասպա բազուկի... Ո՛հ հարազատ զավակ չէ այն, որ իր մոր սուգը չհարգե և օտարության բարօրությունը վայելելու ատեն իր հայրենիքը կուրանա: Հարազատ զավակը իմ գիրկս կբնտոնե, ինձ կգա, բարե չղրկեր, վասնդի լավ գիտե, որ ես հողես չեմ կրնար զատվիլ և կողակցիս փոշվո վրա կհսկեմ ավելի լավ սեպկելով իրեն բով մեռնել բան թե իրմե հեռու ապրիլ»:

2. ՀՐԱՆՏ.— Երկդիմի կռնավոր, էջ 60—61:

Անանուն մի հայ կրոնավորի դեմ է ուղղված, որն առավոտյան նզովում է կաթուղիկներին, իսկ երեկոյան սեղմում է նրանց ձեռքը: Նրա երկդիմությունը մերկացվում է, հարված է ստանում նրա «վայրաբար շողոթորթությունը», «բայց երբ արդյոք ազգայինք պիտի զգան, որ մեր կրած ամեն թշվառությունները այս տեսակ մարդերու ձեռքով պատրաստված են: Երբ պիտի տեսնեն, որ ժողովրդի մը կրոնքը զործի ընողը՝ այն ժողովուրդին հորը կփորեն...»:

3. Ս. Ո.— Լաֆոնթեն և Լամարթին, էջ 62:

«Պարոն Լամարթին, կրսենք, հիմա կրիտիսություն կընեն... և կուզե ինքնորեն Լաֆոնթենը դատել, բայց... Լաֆոնթենին վրա իր քսած մուրը պիտի անցնի մութի պես...»:

4. Ո. ՍԲՊԵԼ.— Հելլստայի բազավոր և հայ մը, էջ 62—63:

Վերարտադրելով ֆրանսիական թերթերում Հունաստանի Գեորգ թագավորի դեմ ուղղված ծաղրը, դիմում է նրան փառաբանող այն տետրին, որի «հեղինակը հայազգի մ' է»։ Նման «երկդիմի մարգերն» են պատճառը «որ հայք առաջ կերթան դեպի... կորուստի ճամբան»:

5. (Լևոստորագիր և անվերնագիր թղթակցություն), էջ 63:

Պաշտպանում է «Սիեբլ» լրագրին, որը քննադատում է Թունիսի տերությունը՝ մեծ ծախսերով հզոր ռազմանավ ձեռք բերելու համար: Թղթակցության հեղինակը գտնում է. «Երբեք ապահովություն, բարի տնտեսություն և կրթություն— ահա իրենց օգտավոր եղածները: Հարկ և բաժ առնուլ, ժողովուրդը կեղեքել նավեր կամ զնգեր զրահելու միտքով, անդի ծայրը խենթություն է և նիհարություն կբերե բան թե զորություն»: Դա հիշեցնում է Լաֆոնթենի առակի գորտը:

6. Ա. Ո. — Մեյերսկեր, էջ 63:

Հաղորդում է «անգյուտ թատերգությունների» հեղինակի մահը և գնահատող խոսք ասում նրա մասին:

7. Մանր լուրեր, էջ 63—64:

Զանազան լուրեր և հաղորդումներ լրագրերից:

7. Ս. Ս. — Ազդ, էջ 64:

Հախտնում է ընթերցողներին. «Արևմուտքի հունիս ամիսի մեջ պիտի սկսի հրատարակել Մալր և դուստր անունով ազգային վեպ մը... պարզ և որքան կարելի է ռամկորեն գրված», ապա տպագրելու է «փոքր թատերգություն մը, որուն մեջ հեղինակը, ազգային քանի մը պակասությունները» կծաղրել: «...Մեր ժողովուրդը զեռ ուղիղ կարծիք մը չունի թատրի վրայոք և հինումին տեսիլներու կհետևի դպրության այս հուռթի մասը մշակելու ատեն: Անոր համար թատրի վրա ալ երկարորեն խոսելու դիտավորություն ունինք: Ի վերջև Արևմուտքի պիտի հրատարակե Արծազանի Բաբիգյան անունով հողավածներ, ուր պիտի կրկնվին կամ նկարագրվին կիսամայա բոլոր երևելի ու ծաղրելի դեպքերը, որոնք կկատարվին Ֆրանսայի մայրաքաղաքին մեջ...»:

1864, Հոկտեմբեր 1, № 9, էջ 65—72

1. Ս. Ս. — Թե ինչպես կկործանի ազգ մը, էջ 65—66:

Արծազանքելով ֆրանսիական մի թերթի հողավածին, Ստ. Ոսկանյանը խոսում է Շամիլի զլխավորած շարժման մասին և անում որոշ խորհրդածություններ:

2. ՀՐԱՆՏ. — Խաբուլեոն Գ և դազեքանի մը, էջ 66—69:

Հախազգի ուղևորը զարմացել է մամուլից իմանալով, որ Ֆրանսիայի թագավորն ընդունել է ժուռնալիստ էմիլ զը Ժիրարդենին «և երկարորեն խորհեր է քաղաքական ծանր խնդիրներու վրա... — Զհի գիտեր, որ Նորին Վեհափառությունը դազեքանիներու հետ հարաբերություն ունի: — Ոչ միայն հարաբերություն, այլև բարեկամություն: Նորին Վեհափառությունը պատիվ կսեպե տաղանդը հարգել, վասնդի ճշմարիտ անվությունը տաղանդի վրա է և ոչ անունի», — պատասխանում է Ոսկանյանը և ուղևորի հետ ունեցած երկխոսության ընթացքում արտահայտում իր մտքերը մամուլի ղերի, տաղանդավոր գործիչներին գնահատելու մասին: Այդ ընթացքում էլ զուգակշիռ է արվում Թուրքիայում հալ մամուլի, խմբագիրների ու լրագրողների համար ստեղծված վիճակի և Եվրոպայում՝ Ֆրանսիայում մամուլի ու հրապարակախոսների դիրքի միջև. «...Եվ ո՛ր արդյոք, մեր օրերը, տաղանդը ավելի ուժով և շուքով կհայտնվի եթե ոչ հրապարակի թերթերու մեջ, որոնք պատերազմի դաշտն ոչ նվազ վրդովալի և վտանգալի ասպարեզ են մարդկության շահերու համար... Ա՛հ բարեկամ, լուսավորություն չկա բնավ ժողովուրդի մը մեջ, ուր միտքը կարհամարհվի, ուր միտքը կխանդարվի և ուր միտքի տեր մարդը ետին ոսկեկուռ տղետի մը թուրումուրով կպատվի: ... Մարդս միտքով միայն մարդ է և ոչ ոսկեկով կամ թավիշով: Ապրելը միտքով միայն ազդ են և ոչ բանակի մը զորություն կամ արտաքին դադարում:» «— Ըսածնիդ կհավանիմ, բայց գիտնաք, որ Թյուրքիայի մեջ շանցնիր այն. հոն ոսկի և սուր հարկավոր են հարգ և շուք

ընդունելու համար... օրագիրները շահու սիրով կապված՝ լռություն կպահեն կամ վախճալով ծայրե ծայր կստեն...»: «Ո՛հ դիտեմ... սուտ լրագիրներ ազգայիններու սուտ կարծիք տվին լրագրության վրայոք և այսօր քիչ ժողովուրդ կգտնվի մարդկության մեջ, ուր լրագիր մը շինողի անունը ավելի անարգ կերպով հիշատակվի: Եթե ազգայինը կերևակայեն թե ճշմարիտ հրատարակություններ ունին կսխալին մեծապես... Հայերը կարդալով աչքի լույս կորուսնեն չպիտի կրնան լույս գտնել կարծված օրագիրներու մեջ: Ասով չեմ ուզեր ըսել սակայն թե հանցանքը միայն զրոգներու քովն է. հասարակությունն ալ մասունի... ազգայիններու թյուրբությունը այնքան քիչ պատիվ ցույց տված է օրագիրներու վրա, այնքան զանոնք հալածեր և գիշատեր է, որ լուսավորության ծառայելու և ընդհանուրին օգուտը բնտուելու տեղ՝ ստորին շողորորթության և սուտումուտ կարծիքներու արծազանք եղած են ստորագրություններ գտնելու միտքով»:

Այն բանից հետո, երբ հեղինակը նշում է թե Պոլսում «ամենքը միաբերան ըսին, որ Արևմուտքը խայտառակ թերթ մ'է և ևս՝ անպատիվ անձ մը...», խոսքը դառնում է հայության բացասական գծերի շուրջը: Զրուցակիցը երկյուղում է, որ հեղինակ-խմբագրի խոսքերը հայտնի կդառնան Պոլսում կամ Իզմիրում, բայց նա կրկնում է իր անվարան սկզբունքը, որ հռչակել էր դեռ 1859-ին. «Պիտի գրեմ, որ կարդան և սրբադրվին. ազգի մը պակասությունները միշտ պարտըկել վերք մը պահելու կնամանի... Ավելի լավ է վերքին խորությունը քննել և դարման բնտուել... քան թե անհոգություն ընել և աշխատել արտաքին զարդերով մարդ խաբել: Ըշմարիտ ազգասիրություն ասոր կըսվի... Ազգասիրություն չէ այն զգայությունը, որ ազգին պակասությունները կսիրե, հապաախասիրություն: Անհնարին է, որ հինգ դար գերության լուծին ներքև ժողովուրդ մը տրորվի և անբիծ մնա մանավանդ օտար երկրներու և օտար ժողովուրդներու մեջ»:

Ինչ վերաբերում է իր պարբերականին, ապա Ստ. Ոսկանյանը ասում է. «Եթե Արևմուտքը սուտ օրագիրներու պես ժողովրդին ստակը ուտողները գովեր... Եթե ստվերի մեջ կամ փիլոսոփիայի մը ներքև պահվելու մարգերու կողմը բռներ, եթե մեռնեն զուրկ քրիստոնյաներու լրբությունը ծածկելու աշխատեր, եթե մատնության հետ դավադիր ըլլար, եթե լրտեսությունը ի դորձ դներ Մեհ-րուժանիկներու հետ, եթե անըմբռնելի ընկերության մը անդամ գրվեր, եթե կեցցե նոր Հայաստան և Սահմանագրություն պողար այն մարգերու ընկերություն մը, որոնք ազգին տունը փլեցին, եթե Գիլիկիայի անունը ծամծմեր, եթե Կիլիկիայի լեռներու արծազանքը թշնամվո ականջը հասցներ, եթե տեսակ մը հայերու պես վերածնություն քարոզեր և օտար դայեկի մը ձեռնտվությունը խնդրեր և եթե այս ամենը ընելով հարյուրավոր անմեղներու արյունը թափել տալու առիթ ըլլար, այն ժամանակ ազգասեր և հարգի անձի մը անունը կժառանգեր և Արևմուտքին վրա վայրենի կիրքերով մուր չէր քսվեր բնավ: Զուգեցի այսպես վարվիլ և այս կերպ ազգասիրության անունը ժառանգել համոզված ըլլալով, որ մեծ վտանգ պիտի ծագի անկե»:

3. * * * — Մխիթարյանի՝ և տիկին Ժորժ Սանտ, էջ 69—70:

Մածկանվանը փոխարինող երեք աստղանիշերի տակ հանդես եկող հեղինակի (թերևս ինքը՝ Ոսկանյանն է) նամակին «Ս. Ո.»-ն կցել է ծանոթագրու-

թյուն, որով հայտնում է, որ «ուրիշին կարծիքները մեր վրա չենք ուղեր առնուլ: Մենք Սուրբ Ղազարու վանքին համար ո՛չ բարեկամություն և ո՛չ թշնամություն ունինք». պատրաստ է լավը գովել, նաև «խստիվ դատել այն կարծիքները, որոնք մասնավորապես մեր ազգին և ընդհանրապես լուսավորության շինասարքեր կթվին»:

Նամակի հեղինակը շնորհակալ է «Արևմուտքից» Ժ. Սանդին նվիրված հոդվածի համար. «Ըստ իս տիկին Ժորժ Սանտ դարուս Ծրանսայի առաջին վիպագիրն է»: Նա հարկ է համարում «Արևմուտքին» հաղորդել Բտալիայից Սանդի գրած այն նամակի մասին, «որ երկարորեն կնկարագրե Սուրբ Ղազարու վանքին իր ըրած այցելությունը և հոն ընդունած տպավորությունը»: Սանդի վերարտադրվող նամակի զլխավոր նյութը կամընենին նվիրված այն զրույցն է, որ տեղի է ունեցել վիպասանուհու և նրան ուղեկցող Մխիթարյանի միջև: (Ի դեպ, պարզվում է, որ կամընեն ևս այցելել է Սուրբ Ղազարի հայոց վանքը): Ծանոցից բերվող քաղվածքում Մխիթարյանների մասին նաև ասվում է, որ «եթե իրենց թող տրվի, որ հանդարտորեն հարստություննին վայելեն, ստրկորեն պիտի կրկնեն միշտ զիրենք պաշտպանող իշխանության պատվերը»:

4. (Անվերնագիր նախաբան և երգ, որը չի ստորագրված), էջ 70—72:

0. Օրպելը նախաբանում հայտնում է, որ երգը «ազատ թարգմանություն է անգղիերեն երգի մը» և նշում է, որ «ազատ թարգմանությունը բնագրեն ավելի ընտրելի կթվի... վասնզի ավելի իմաստ ունի», ապա հիշեցնում է հայկական առակը.

«Հաստ ու բաբակ է մեկ գին
Վա՛յ կա բաբակ մանողին»:

Երգն ուղեկցվում է Շեքսպիրից քաղված բնաբանով՝ «Հին ոխը թող որ քանցնի», որը և խտացված ձևով արտահայտում է նրա բուն իմաստը:

5. Մանր լուրեր, էջ 72:

Քաղված են մամուլից: Հաղորդումներից մեկը նվիրված է Գարիբալդիի այցելությանը «Լոնտրայի ազնիվ ընտանիքներու և քաղաքական անձերու»: Նշում է նրա «հավատալը, տղայի պես..., ընդհանուր ծափի և զովեստի», և ապա նկատում. «Կարիպալտիին ազնիվ և պարզ սիրտը չղգաց, որ Անգղիայի Էրկդիմի քաղաքականության գործի մ' էր»¹⁶:

1865, ՀՈՒՆՎԱՐԻ 1, № 10, էջ 73—80

1. (Անվերնագիր՝ նախաբան-խմբագրական), էջ 73:

2. 0. ՈՐՊԵՆ. — (Անվերնագիր հոդված՝ «Արևմուտքի» դադարման մասին), էջ 73—77:

¹⁶ 1864 թ. հունիսի 1-ից հետո «Արևմուտքը» դադարել է մինչև 1865-ի հունվարի 1-ը: Վեցամսյա դադարից հետո հրատարակվող համարների էջակալումը և հերթական համարակալումը շարունակվել են:

Հանդեսի հերթական՝ 10-րդ համարին, ինչպես նշեցինք, մենք անդրադարձել ենք առանձին հոդվածով:

3. (Խմբագրի հոգովածը՝ նվիրված Մատթևոս կաթողիկոսի նամակին, որ ստացել է տարիներ առաջ Մ. Նալբանդյանի միջոցով և որը հրապարակում է), էջ 77—78:

4. Օ. ՈՐՊԵԼ.— Հռոմ և Հայաստան, էջ 78:

5. ՎՐՈՒՅՐ [Մ. Մամուրյան].— Նամակ Ե, էջ 79—80:

6. Մանր լուրեր, էջ 80:

1865, ՀՈՒՆՎԱՐԻ 15, N 11, էջ 81—88

1. Օ. ՈՐՊԵԼ.— Իշխան Նաբոլեոնի ընտրությունը, էջ 81—82:

Քննում է իշխանին կայսրության երկրորդ գահապետ ընտրելու և Հռոմի պապի հռչակած կոնդակի հետ կապված դեպքերը:

2. Օ. ՈՐՊԵԼ.— Լորտ Բալմերսբոն և մամուլ, էջ 82—83:

Մտորումներ ազատության, մասնավորապես մամուլի ազատության ու նրա դերի մասին անգլիական լորդերի հայտնած կարծիքների շուրջը՝ «մյուս ազգերին» ուղղված ակնարկով՝ հետևել այդ օրինակին: «Ուր ազատություն չկա մարդիկ կշարժին, կաշխատին, օր կանցնեն (և Աստված գիտե ինչ օրեր), բայց չեն ապրիր... Նայե մեյ մը այն ծաղիկը, որ քարի մը ներքև կփթթի. հազիվ թե անոր մեկ ծայրը դուրս կելնե և այն ալ միշտ ծուռումուռ կերպով»: Բերում է Անգլիայի ծովային պաշտոնյայի խոսքերը՝ նախապես ծանոթագրելով, թե «պ. Սերվիլյան անուն բժիշկը թող լսե»։ «Ազատ և անարգել մամուլով այնպիսի վիճակի մը մեջ կդրվինք, ուր բան մը չենք կրնար ընել առանց պատճառի հայտնելու: Ազատ մամուլը շատ բարոյություններու հետ այս ալ ունի, որ ազգին պաշտոնավորները կրնադատե իրենց բրածները կշռել»:

3. Պարոն Չամուռնյան և տեր Միշոն, էջ 83—86 (անստորագիր, վերջը հաջորդ համարում):

Երգիծական երանգով ակնարկ՝ թուրքական վարք ու բարքի քննադատությամբ ու կնոջ ընդհանուր վիճակի նկարագրությամբ: Շոգենավում, 1853-ի հուլիսի վերջերին հեղինակը ծանոթանում է մի իզմիրցի երիտասարդի, որի հետ զրուցում է նաև կրոնական հարցերի շուրջը: Ընդգծում է ասիացիների, նաև հայերի հատուկ կիրքը հավատքի հարցերի նկատմամբ և նախապես նշելով, որ նրանք հինգ դար է, ինչ ճնշվում են օտար լծի տակ, բացատրում է. «Առջի բերան կարգե դուրս երևույթ մը կրնա թվիլ այս, բայց եթե մտածենք այն երկար բռնության վրա, որու ներքև Ասիայի բրիստոնյա ժողովուրդները տրորվեր են ամեն մտային և քաղաքային զրադումներե զրկված ապրելով, անոր բուն առիթը կրնանք ըմբռնել և սրտմտելու տեղ կհարկադրվինք ներելու»: Իր արտաքին կերպարանքից ֆրանկի տեղ դնող տիկնոջը Ոսկանյանը պատասխանում է իտալացի բանաստեղծի խոսքով. «Հագուստս և դեմքս վտխված են, բայց ոչ սիրտս»:

Բերում է Չամուռնյանի մասին այն դրառումները, որոնք տեղ են գտել տեր Միշոնի ֆրանսերեն հրատարակված գրքում: Դրանք հանգում են այն բանին, որ Չամուռնյանը «համոզված է թե Հռոմի հետ միությունը ամենևին

դժվարություն մը չկրե՞ր բոլոր հայ ազգին կողմէն: Ըմբոստանում է նրա միտումների դեմ, մի այլ անգամվա թողնելով Չամուռայանի քաղաքական գիտավորությունների բնությունը»:

4. * * *. — Վեր նայել (բանաստեղծություն), էջ 86—87:

Ստեղծագործության հեղինակը չի նշված, իսկ թարգմանիչն իր ստորագրության փոխարեն երեք աստղանիշ է դրել:

5. Ս. ՈՍԿԱՆՅԱՆ. — Բ. Ժ. Բրուտոնին մահը, էջ 87—88:

Անդրադառնում է երեք «պարբերության», երբ Պրուդոնը նվիրվել էր սոցիալական գիտություններին «և խիստ համեստ պաշտոնով մը զբաղած, բանվորներու իրավունքը ձեռք կառնու և զանիկա կեղերողներու դեմ անհաղթելի զենքեր կդարբնէ (ֆորժե)», երբ 1848-ի փետրվարյան ապստամբությունից հետո «խորհելու ժամանակը անցավ և գործելու օրը եկավ ըսելով, իր հուժկու գրիչով կնետվի հրապարակի վրա...» և երբ արստորում գտնվելով «կյանքի բյուր դժվարություններու ներքև նկուն, վերստին գրիչը ձեռք կառնու ու կաշխատի իր ապրուստը հոգալ...»: «Մտքի բանվորին» զնահատելով, նրան դասում է «ժողովրդին վերբերու դարման գտնելու համար» սոցիալական գիտությունը մշակող զոհերի շարքը, «մտքի ուժով և գիտությամբ» առավելություն տալով Պրուդոնին, քան Կապեին, Լուի Բլանին, Պիեր Լերուին ու նրանց նախորդներին: Նրա սկզբունքն էր «անմեռ ազատություն», ունեցել է սխալներ, բայց «ինչպես ըմբիշ մը կիյնա միշտ արիությամբ»: «Նիստ առաքինի, պատվավոր և համեստ անձի» գործերից հիշատակում է միայն «Լե Մալթյուզիեն» հոդվածը, որը Պրուդոնը գրել է բանտում, որտեղ և «պատիվ ունեցանք զինքը ճանչնալու» — ծանոթագրում է Ստ. Ոսկանյանը:

6. Մանր լուրեր, էջ 88:

Քաղված են մամուլից: Իրտատպում է իտալական «Քոնթեմբորանեո» լրագրապետի՝ Սանբուլի, աղդն իր Բերթի մասին. վեց տարում (տպագրել է 1180 համար) «երեսունչորս անգամ իշխանությունը զայն բռնել տվավ, 7389 լիրա տույժի և 664 օր բանտի դատապարտեց: Տունս Թալլվեցավ ռամիկի հարձակումե մը, ստացվածքս և պատիվս բղկտվեցան անխնս և կռիվս կշարունակեմ տաս վեց տարի ե Վեր: Թող այս օրինակ ըլլա անոնց, որոնք մինչև այս կեստս իրենց առատամիտ բարեկամությունը շմերժեցին ինձ»: Նշում է, որ պ. Ս. Սանբուլը մոլորվում է երբ հայրենիքին օգուտը այն տեղերը կփնտռե, ուր հինումին թուիքներու միայն համարար մը կգտնվի», բայց «այսպիսի հալածում մը բռնության կվայել և ոչ ազատության, որն որ արևի պես կփայլի ամեն տեսակ միտքերու համար և որն որ իր պաշտպաններե կուզե վեհանձնություն և ոչ կույր եռանդի կատղություն»:

1865, Փետրվարի 1. N° 12, էջ 89—96

1. Օ. ՌԻՊԵԼ. — Սրբազան Բարին կոնդակը, էջ 89—91:

Խոստմանը համաձայն քննում, հակադրվում ու հերքում է Հոռմի պապի մի շարք բանադրանքները՝ ծաղրելով նրա կոնդակը և հենց իրեն, որ ներկայանում է իբրև «տգետ ծերունի մը, որ իր ժամանակը անգամ չճանչնար»: Հատկապես պապին հակադրվում է այն առաջարկը բանադրելու համար,

ըստ որի «փիլիսոփայությունը պետք է սորվիլ առանց գերբնային հայտնություն մը դիմելու», և պաշտպանում է գիտության ու նրա պսակը կազմող փիլիսոփայության իրավունքը, ցույց է տալիս, որ պապը վերջին հաշվով բանադրում է գիտությունը, որն «անկախ թագավորություն մը է» և «դուստր է արդի լուսավորության», նորոգում է «ժողովուրդի միտքը, սիրտը, բարքը և վարքը»: Պապը բանադրել է նաև «եկեղեցին պետք է որ բաժանվի Տերությունե, և Տերությունը եկեղեցիեն» ձգձարտությունը: «Այսպիսի բանադրանք մը բնիկ հետևություն կթվի Հռոմի ընտրած գիտության, վասնզի նպատակ ունի Հռոմին շահը և ոչ կրոնքին փառքը: Կրոնք մը, որուն հիմը սեր է և նպատակը՝ արհայնություն, պետք ունի ազատության և ոչ զենքի կամ ուժի՝ իր պաշտոնը կատարելու համար... Նորին Սրբությունը կուզե ըսվիլ նաև նորին Վեհափառություն և ոսկեզօծ դավազանի հետ միատեղ սուրբ Պետրոսին սուրբ կրել: Իր ժողովուրդին և մյուս ժողովուրդներու կամքը այս չէ... Երբ սրբություն մը այսպես կխոսի, փիլիսոփայության ըսելիք չմնար, հասկա գործելիք»:

2. Պառոն Չամուռնյան և տեր Միշոն, էջ 91—95 (նույն վերնագրով ակնարկի վերջը):

3. Օ. ՈՐՊԵԼ.— Հետաքրքիր կիներ, էջ 95—96:

Վերապատմում է բեմադրվող «փոքր կատակերգության մը» բովանդակությունն առանց մեկնաբանությունների:

4. Մանր լուր, էջ 96:

Քաղված է մամուլից:

ЖУРНАЛ «АРЕВМУТК» СТЕПАНА ВОСКАНЯНА В 1864—1865 ГОДАХ

(Библиография)

М. Н. АКОПЯН

(Р е з ю м е)

Воинствующий публицист-редактор, демократ Степан Восканян (1825—1901), один из соратников М. Налбандяна, в 1855—1856, 1859 и 1864—1865 гг. в Париже издавал журналы «Аревелк» («Восток») и «Аревмутк» («Запад»).

Номера журнала «Аревмутк», увидевшие свет в 1864—1865 гг., после четырехлетнего перерыва, остались неизвестными исследователям, изучавшим деятельность Ст. Восканяна и историю его журналов (Лео, А. Г. Иоаннисян, А. Б. Каринян и другие). Эти номера, ставшие библиографической редкостью еще в конце прошлого века, не имеются также и в отечественных книгохранилищах. Неоднократные попытки выявить их не увенчались успехом.

Тем не менее «Аревмутк», издававшийся в 1864—1865 гг., имеет принципиально большое значение как для обобщения истории журнала, так и для полноценной характеристики публицистической деятельности Ст. Восканяна, вызвавшей противоречивые толки еще при жизни редактора. Предметом научной полемики был и до сих пор остается вопрос кажущегося отступления редактора-вольномыслица Ст. Восканяна от своих прежних позиций.

Наши многолетние поиски номеров «Аревмутка» за 1864—1865 гг., к счастью, завершились успехом. В одном из зарубежных армянских книгохранилищ были обнаружены номера (№ 1—12) «Аревмутка» за 1864—1865 гг. На основе копий этих номеров, полученных нами несколько лет тому назад, вниманию научной общественности предлагается расширенная библиография журнала за февраль—июнь 1864 г. (№ 1—9) и январь—февраль 1865 г. (№ 10—12).